

# ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

## ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ՀԱԿԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԱՐՏԱՑՈՒՄԸ

### ԳԵՎՈՐԳ ԴԱՆԻԵԼՅԱՆ

Սույն հետազոտության նյութը, դրանում տեղ գտած դատողությունները առաջին հայացքից կարող են այն թյուր տպավորությունը ստեղծել, թե ժխտվում են Սահմանադրության հիմնադրույթների ներքին ներդաշնակության հնարավորությունը և ընդհանրապես սահմանադրական արժեքների համակարգված կառուցակարգի անհրաժեշտությունը: Այդպիսի մտավախության հիմքը թերևս այն է, որ արտաքուստ ներդաշնակ նորմատիվ փաստաթղթում ամրագրված արժեքների միջև բովանդակային հակասականություն տեսնելն այնքան էլ համահունչ չէ ներկայումս գրեթե անվիճելի ճանաչված սահմանադրաիրավական ուսմունքներին:

Նախապես հարկ ենք համարում նկատել, որ հետազոտության գերխնդիրը բնավ արհեստական հակասություններ գտնելն ու դրանք քննադատության թիրախ դարձնելը չէ, այլ ի սկզբանե ձևավորված ու անխուսափելիորեն հակասության մեջ գտնվող արժեքների պարագայում հնարավորինս ներդաշնակ, փոխհամաձայնեցված համակարգ առաջադրելը:

Այն, որ Սահմանադրությունն արտացոլում է հասարակական ընդունելի արժեքները և ամրագրում դրանց պաշտպանության երաշխիքներ, կասկած չի հարուցում, սակայն դրանից ամենևին չի բխում, որ պետության հիմնական օրենքն ինքնին ձեռք է բերում ինքնաբավության որակ, ինչը կբացառեր ներքին այնպիսի հակասությունների առկայությունը, որոնք անգամ իրարամերժ են: Խնդիրն այն է, որ արտացոլելով հասարակական հարաբերությունները, Սահմանադրությունը որքան էլ որ փորձի «գտել» դրանք անցանկալի, բացասական բաղադրիչներից, միևնույնն է, ի գորու չէ անտեսելու այն անխուսափելի հակասությունները, որ գոյություն ունեն արդեն ընդունելի արժեքների միջև, քանզի նույնական չեն դրանց իրական «կշիռը», դրանց նկատմամբ հանրային պահանջարկը: Միանգամայն առողջ ցանկացած հասարակարգում կան առաջնահերթ խնդիրներ, որոնց հետևողական լուծման գործընթացը ենթադրում է այլ արժեքների նկատմամբ որոշ վերապահումներ անելու անհրաժեշտություն: Խնդիրն էլ՝ ավելի է բարդանում արժեքների անորոշության պատճառով, ինչը հատկապես բնորոշ է արդի դարաշրջանին<sup>1</sup>:

Արդի դարաշրջանն առանձնանում է իրավաքաղաքական հիմնարար ուսմունքների փոխհարաբերության երկակիությանը: Մասնավորապես, մի

<sup>1</sup> Տե՛ս **Арутюнян Г.** Роль конституционной диагностики в обеспечении устойчивости общественного развития. «Конституционное правосудие». Выпуск 4(20)2010, Ер., 2010, էջ 28:

կողմից նկատվում է դրանց համաշխարհայնացման երևույթ, ինչի շրջանակներում փորձ է արվում փոխզիջումների արդյունքում հնարավորինս մերձեցնել իրավական պատկերացումները, մյուս կողմից՝ տարածաշրջանային, կրոնական ու տարաբնույթ այլ գործոններով պայմանավորված՝ ոչ միայն ավելի ու ավելի են խորանում տեսական հակասությունները, այլև ի հայտ են գալիս միանգամայն նոր խնդրահարույց ուսմունքներ: Սոցիալ-քաղաքական արժեքների առնչությամբ խիստ հակասական, հակոտնյա ուսմունքների գոյությունը, կարծում ենք, թելադրված է հենց հասարակության առանձին բաղադրիչների միջև առկա անխուսափելի հակասություններով:

Խնդիրն էլ ավելի է բարդանում, երբ մշակութային գործոններով պայմանավորված՝ միանգամայն տարբեր մոտեցումներ են ձևավորվում արդեն միևնույն արժեքների նկատմամբ. այն, ինչ եվրոպական համայնքն ընկալում է որպես «համամարդկային արժեք», ասիական կամ աշխարհամասային մեկ այլ համակարգում ընկալվում է որպես համայն մարդկությանը սպառնացող չարիք: Ընդ որում, որքան եվրոպական կառույցները հետևողականություն են դրսևորում իրենց որդեգրած արժեքների ճանաչման շրջանակներն ընդլայնելու ու նորանոր արժեքներ առաջադրելու հարցերում, այնքան առավել ակնառու է դառնում տրամագծորեն հակառակ տեսությունների ազդեցությունը: Այս տեսանկյունից համամիտ ենք նաև այն հեղինակների հետ, ըստ որոնց՝ համաշխարհային արժեքներ ձևավորելու փորձերը բազմաթիվ ոլորտներում անհաջողության են մատնվել նաև այնպիսի միջազգային կառույցների գործունեությունում, ինչպիսիք են Ազգերի լիգան և ՄԱԿ-ը<sup>2</sup>:

Այս զարգացումները, գրեթե առանց էական բացառության, կարծում ենք, դրսևորվում են նաև սահմանադրական արժեքների առնչությամբ ուսմունքների փոխհարաբերությունում. նկատի ունենք այն, որ խիստ արդիական է դառնում հենց այդ արժեքների գնահատման արքիլոգիական մեթոդաբանությունը, երբ անխուսափելիորեն հակվում ենք առանձնացնելու սահմանադրական որոշ արժեքներ, ընդգծելու դրանց գերակայությունը, ինչի հետևանքով կամա թե ակամա խորանում են հակասություններն արդեն այդ արժեքների միջև: Եթե փորձենք համակարգված տեսքով ներկայացնել այս երևույթի սոցիալ-հոգեբանական ու իրավաքաղաքական պատճառները, ապա, թերևս, հարկադրված կլինենք ընդունելու, որ նշված հակասությունների ակունքը հենց հասարակության մեջ եղած ներքին անխուսափելի հակասություններն են: Սահմանադրությունը, արտացոլելով հասարակության ոչ միայն կայուն վիճակը, այլև դինամիկ զարգացումները, անխուսափելիորեն ներառում, «սեփականացնում է» նաև դրանց բնորոշ հակասական զարգացումները և «վարակվում» դրա «հարուցիչներով»:

Ժողովրդավարության զարգացման մի տևական փուլում տիրապետում էր այն մտայնությունը, որ իրավահավասարության, իրավունքի գե-

---

<sup>2</sup> Տե՛ս **Зоркин В.** Вызовы глобализации и правовая концепция мироустройства. «Конституционное правосудие». Выпуск 4(20)2010, Ер., 2010, էջ 5:

րակայության և նմանաբնույթ այլ սկզբունքներ ինքնըստիներյան կհանգեցնեն ներքին հակասությունների մեղմացմանը և սահմանադրական արժեքների երաշխավորվածությանը: Ընդ որում, հնարավոր հակասությունների առնչությամբ աշխարհի տարբեր երկրների օրենսդրություններում ամկա իրավակարգավորումները գրեթե սահմանափակվեցին իշխանությունների տարանջատման ու հավասարակշռման սկզբունքի և իրավունքների ու ազատությունների ողջամիտ սահմանափակումների շրջանակներով:

Մինչդեռ կարծում ենք, խնդիրն անհամեմատ ավելի ընդգրկուն ու բարդ է, քանզի այն այս կամ այն չափով վերաբերում է սահմանադրական բոլոր արժեքներին: Սահմանադրական ցանկացած արժեք այս կամ այն կերպ, այս կամ այն չափով հակասության մեջ է սահմանադրական արժեհամակարգի բաղադրիչների հետ, ինչը պետք է գնահատվի ոչ թե որպես իրավական զարգացումների ձախողում, այլ բնականոն գործընթաց: Պարզապես, իրավագիտության խնդիրն է համարժեք բացահայտել այդ հակասությունները և առաջադրել հնարավորինս համագոր այնպիսի լուծումներ, որոնք տեսանելի կդարձնեն յուրաքանչյուր երևույթի արժեքաբանական կշիռն ու նշանակությունը, այլ արժեքների հետ փոխհարաբերությունում դրա բովանդակային տարրերի վերանայման հնարավոր սահմանները և փոխգիշման եղանակները: Ընդ որում, անհրաժեշտ է նկատել, որ սահմանադրական արժեքների մեծ մասն ունի նաև ներքին հակասություն, որն առաջանում է այդ արժեքների կառուցակարգային բաղադրիչների միջև<sup>3</sup>:

Այն, որ սահմանադրական արժեքների միջև հակասություններն այս կամ այն չափով անխուսափելի են, կարելի է հիմնավորել բազմապիսի հիպոթետիկ օրինակներով: Կարծում են՝ ներքին հակասություններից զերծ չեն անգամ հանրահայտ սկզբունքներն ու անհատի և պետության բնութագրիչները: Այսպես, Սահմանադրության 1 հոդվածով Հայաստանի Հանրապետությունն ինքնիշխան, ժողովրդավարական, սոցիալական, իրավական պետություն է: Տվյալ դեպքում հաճախ որևէ ներքին հակասություն չենք տեսնում, քանզի հոգեբանորեն հակված ենք այն մոտեցմանը, որ յուրաքանչյուր պետություն, օրինակ, չի կարող անսահմանափակ սոցիալական լինել, քանզի այդ դեպքում արդեն հարցականի տակ կդրվի վերջինիս իրավական լինելը: Սակայն գործնականում, երբ այդ հատկանիշների առնչությամբ պատկերացումները զուտ տնտեսական նպատակահարմարության կամ այլ դրդապատճառներով վերանայվում են, անմիջապես ծագում են սոցիալական սուր տարածայնություններ:

Թերևս վերն ասվածի վառ օրինակ է կառավարության կողմից վերջերս գործազուրկների սոցիալական ապահովության քաղաքականությունն արմատապես վերանայելու նախաձեռնությունը: Կառավարության պատկերացմամբ՝ պետությունը, սոցիալական լինելով հանդերձ, պետք է գերխնդիր համարի ոչ թե սոցիալապես թույլ ապահովված խմբերին կենսաթոշակ կամ նպաստ հատկացնելու, այլ նրանց կենսունակությունը բա-

<sup>3</sup> Տե՛ս **Шапо А.** Конституционные ценности в теории и судебной практике: введение // Сравнительное конституционное обозрение, № 4(65), 2008, էջ 4:

րելավելու և համապատասխան մասնագիտական հմտություններ տալու միջոցով հասարակության լիիրավ անդամներ դարձնելու քաղաքականությունը: Կառավարությունը այդպիսի դիրքորոշման գրավական է համարում մասնագիտական կրթության արմատական բարելավումը: Մասնավորապես, նպաստների համար նախատեսված ֆինանսական միջոցներն այսուհետ կուղղվեն նույն գործազուրկների որոշ հատվածի համար մասնագիտություն ձեռք բերելու դասընթացների կազմակերպմանը: Սակայն արդեն այս փուլում հնչում են ճիշտ հակառակ տեսակետներ, ըստ որոնց՝ սոցիալական ապահովությունը չի կարող ընկալվել սոսկ մասնագիտական ուսուցման գործընթաց, որ դա կարող է լավագույն դեպքում կիրառվել նպաստների վճարմանը զուգահեռ: Օրինագիծը ներկայացնող կառավարության ներկայացուցչի այն դիտարկմանը, թե կառավարությունը նախընտրում է ոչ թե ծուկ բաժանել, այլ կարթ տալ ու ծուկ բռնել սովորեցնել, պատգամավորներից մեկը սրամտորեն հակադարձեց, թե՛ նախ հարկավոր է ապահովել ծկան անհրաժեշտ պաշար, քանզի դրա բացակայության դեպքում կարթը դառնում է ոչ պիտանի գործիք:

Նմանաբանույթ հիպոթետիկ իրավիճակներ կարելի է առանձնացնել նաև սահմանադրական այլ արժեքների պարագայում:

Ինչևէ, սոցիալական պետության վերաբերյալ պատկերացումները որքան մոտենում են որպես իդեալական ընկալվող չափանիշներին, այնքան ավելի խոցելի են դառնում իրավական պետության այնպիսի բաղադրիչներ, ինչպիսիք են իրավահավասարությունը, սահմանափակման ոչ ենթակա բացարձակ իրավունքները և այլն:

Ներկայումս անվիճելի ու հանրահայտ է համարվում այն, որ Սահմանադրության համաձայն՝ մարդը, նրա արժանապատվությունը, հիմնական իրավունքները և ազատությունները բարձրագույն արժեքներ են, իսկ պետությունը սահմանափակված է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներով և ազատություններով՝ որպես անմիջական գործող իրավունք<sup>4</sup>: Մարդու և իր կարգավիճակի այս համակարգի համատեքստում, կարծում ենք, գլխավորը հենց *մարդն* է, իսկ նրա արժանապատվությունը, իրավունքներն ու ազատությունները կոչված են երաշխավորելու մարդու՝ արդեն որպես սահմանադրական արժեքի գերակայությունը, և, մյուս կողմից՝ ապահովելու մարդկային հասարակարգում անհրաժեշտ ներդաշնակությունը: Վերջին հաշվով, առնվազն ողջամիտ չէ հավասարության նշան դնել ու միաժամանակ նույն կշիռն ունեցող բարձրագույն արժեք համարել և՛ մարդուն, և՛ նրա իրավունքը. ցանկացած իրավիճակում, երբ մարդու էությունը հակասության մեջ մտնի որևէ իրավունքի հետ, պարտավորված ենք լինելու նախապատվությունը տալ մարդուն:

Ներքին հակասությունների հաղթահարման (նկատի չունենք բառիս բուն իմաստով այդպիսի հակասությունները վերացնելը, քանզի դրանց գոյությունը թելադրված է անխուսափելի գործոններով) գիտագործնական մեթոդաբանության հիմքում, թերևս, ընկած է հենց այդ արժեքների հնա-

---

<sup>4</sup> Տե՛ս **Thierry Di Manno**, *Les revirements de jurisprudence du Conseil constitutionnel Français // Les Cahiers du Conseil constitutionnel*, № 2(2006), էջ 173-174:

րավորինս ճշգրիտ «կշռումը», ինչը հնարավորություն է տալիս գործնականում առավել համարժեք պատկերացում կազմելու սահմանադրական արժեքների կիրարկման եղանակների ու շրջանակների մասին:

Ասվածը փորձենք հիմնավորել դարձյալ հիպոթետիկ օրինակով՝ այս անգամ արդեն կապված Սահմանադրությամբ ամրագրված տնտեսական գործունեության ազատության ու ազատ տնտեսական մրցակցության հիմնադրույթի և սոցիալապես խոցելի խմբերի իրավունքների պաշտպանության հետ:

Մենք արդեն մեկ այլ տեսակետից անդրադարձանք սոցիալական պետության էությանը, փորձեցինք ընդգծել թույլ պաշտպանված, խոցելի խմբերին աջակցություն ցուցաբերելու հիմնախնդիրը:

Այս հետազոտության շրջանակներում նպատակահարմար չենք համարում շարադրել այն բազմաբնույթ տեսակետներն ու մոտեցումները, որոնք առնչվում են սոցիալական ապահովության, աջակցության, օգնության էության բացահայտմանն ու բովանդակությանը: Մեր առջև մեկ այլ գործնական խնդիր ենք դրել. ինչպե՞ս երաշխավորել, օրինակ, հաշմանդամների սոցիալական ապահովության սահմանադրական հիմնադրույթի իրագործումը՝ նույն սահմանադրական արժեքների համատեքստում, արդյոք դրա լիարժեք իրացումը ներքին հակասության մեջ չի՞ մտնի դարձյալ նույնաբնույթ այլ արժեքների հետ:

Ի սկզբանե անհրաժեշտ ենք համարում նկատել, որ այդպիսի հակասությունն անխուսափելի է, ինչին արդեն անդրադարձանք, սակայն այն հնարավոր է ողջանտորեն լուծել կամ առնվազն մեղմել, եթե ելակետ ընդունենք այն, որ մարդու բարձրագույն արժեք լինելու վերաբերյալ սահմանադրական հիմնադրույթից բխում է, որ սահմանադրական բազմաթիվ այլ արժեքներ պարզապես չեն կարող լրիվ ծավալով գործել ու երաշխավորվել: Այսպես, Սահմանադրության 8 հոդվածի համաձայն՝ «Հայաստանի Հանրապետությունում երաշխավորվում են տնտեսական գործունեության ազատությունն ու ազատ տնտեսական մրցակցությունը»:

Վերադառնանք կառավարության այն կանխադրույթին, որ սոցիալապես թույլ պաշտպանված խմբերին ցուցաբերվող աջակցության համակարգում առավել նախընտրելի է որոշակի ծառայությունների մատուցումը, ինչի շնորհիվ վերջիններս ձեռք կբերեն անհրաժեշտ ինքնուրույնություն, սեփական ունակություններով իրենց սոցիալական խնդիրները լուծելու հնարավորություն և այլն: Այս տեսանկյունից, կարծես, մասնագիտական ուսուցման քաղաքականությունը խոցելի չէ: Իհարկե, այն առավել հիմնավորված ու կատարյալ կդիտվեր, եթե ուղեկցվեր նվազագույն ֆինանսական աջակցությամբ և մասնագիտական հմտություններ ձեռք բերած անձանց աշխատանքով ապահովելու նվազագույն երաշխիքներով, սակայն դա առանձին խնդիր է:

Անդրադառնանք խնդրին մեկ այլ տեսանկյունից. կարո՞ղ է արդյոք այդպիսի պետական քաղաքականությունը հավասարապես կիրառելի լինել սոցիալապես թույլ պաշտպանված բոլոր խմբերի համար: Նախ, գործնականում հնարավոր չէ անգամ տևական ժամանակում ապահովել մասնագի-

տական ուսուցում անցնելու ցանկություն ունեցող բոլոր գործազուրկների ներգրավվածությունը հիշյալ գործընթացին: Խնդիրն էլ ավելի է բարդանում, անաշխատունակ հաշմանդամների պարագայում:

Ներկայումս հաճախ է խոսվում այն մասին, որ պետական բյուջեի միջոցները պարզապես չեն բավարարում նույն այդ հաշմանդամների՝ նույնիսկ տարրական կարիքների (սայլակներ, պրոթեզներ, կանխարգելիչ բուժժամայություններ և այլն) բավարարման համար: Ինչպիսի՞ն կարող է լինել ելքը ֆինանսական սուղ պայմաններում: Ընդունենք՝ պետական աջակցությամբ նույն հաշմանդամների միության կողմից հիմնադրված որևէ կազմակերպության վերապահվում է ձեռնարկատիրության ակնհայտ շահավետ տեսակ, օրինակ՝ վիճակախաղի կազմակերպում, ինչը հնարավորություն կտա ոչ միայն հենց հաշմանդամների մի ստվար հատվածի ներգրավել այդ նախաձեռնությանն առնչվող աշխատանքներին (վիճակախաղի տոմսերի վաճառք, հաշվապահական հաշվառում և այլն), այլև երաշխավորել վերը նշված կարիքների համար անհրաժեշտ ֆինանսական միջոցներ: Ընդ որում, այդ բնույթի նախաձեռնությունների շնորհիվ հաշմանդամների միությունը պետական բյուջեի սպառողի կարգավիճակից սահուն անցում է կատարում պետական բյուջեն համալրողի կարգավիճակին, քանզի ստանձնում է հարկեր և տուրքեր վճարելու պարտավորություն:

Այս նախաձեռնությունը, կոչված լինելով գործնականում երաշխավորելու մարդու՝ որպես բարձրագույն արժեքի սահմանադրական հիմնադրույթի կենսագործումը, որքան էլ հրապուրիչ ու շահեկան թվա, անխուսափելիորեն հակասության մեջ է մտնում մեկ այլ սահմանադրական արժեքի՝ տնտեսական գործունեության ազատության ու ազատ տնտեսական մրցակցության սկզբունքի հետ: Սակայն հենց այս համադրության շրջանակներում հարց է ծագում. ազատ տնտեսական մրցակցության սկզբունքն իր «կշռով» կարո՞ղ է գերակայել մարդուն, նրա իրավունքներին ու ազատություններին, այդ սկզբունքն անբեկանելի՞ է, թե՞ կարող է իր նվազ նշանակությամբ, իր համեմատաբար նվազ «կշռով» զիջել սահմանադրական այն արժեքներին, որոնք, հիրավի, ողջ արժեհամակարգի առանցքն են:

Մինչդեռ Վիեննայի առևտրային համաձայնագրի, ինչպես նաև միջազգային իրավական բազմաթիվ այլ փաստաթղթերի ներգործության շրջանակներում միանշանակ տիրապետող է դարձել այն մտայնությունը, որ ազատ տնտեսական մրցակցության սկզբունքը գրեթե անձեռնմխելի է, ուստի անթույլատրելի են համարվում անգամ ազատ տնտեսական գոտիների ստեղծման գործընթացները: Առավել ևս, միանշանակ անթույլատրելի են համարվում տեղական արտադրողների համար որևէ արտոնություն սահմանելուն միտված նախաձեռնությունները, օրինակ՝ ծխախոտի արտադրության դեպքում այնպիսի հարկեր կամ մաքսատուրքեր սահմանելը, որի հետևանքով տեղական արտադրողը կհայտնվի ծխախոտ ներկրողի նկատմամբ առավել շահեկան դիրքում և այլն:

Հայտնի է, որ բազմաթիվ երկրներ, այնուամենայնիվ, կարողանում են «գտնել» հիմնավորումներ վերը նշված կանոններից թույլ տված շեղումների համար, որոնք թեկուզ ժամանակավոր, բայց արդարացուցիչ են

գնահատվում նույն միջազգային կառույցների կողմից: Պարզապես, յուրաքանչյուր դեպքում հարկ է լինում խելամիտ փաստարկներով հիմնավորել ներազգային արժեքները պաշտպանելու անհրաժեշտությունը: Այսպես, տևական ժամանակ Սլովակիայի համար Եվրամիությունն մտնելու պայմաններից մեկը համարվում էր խորհրդային դասի ատոմակայանի ապամոնտաժումը: Նկատենք, որ ճիշտ այդպիսի ատոմակայան է գործում նաև մեր երկրում: Բանակցությունների միջոցով Սլովակիայի կառավարությունը պարտավորվեց ապամոնտաժել հիշյալ ատոմակայանը, իսկ Եվրամիությունը պարտավորվեց իր պահանջի դիմաց տալ համարժեք փոխհատուցում՝ 8 մլրդ Եվրոյի չափով: Դա այն գումարն էր, որ անհրաժեշտ ու բավարար էր այդ պետության էներգահամակարգն ամբողջովին դիվերսիֆիկացնելու համար:

Մեկ այլ դեպքում թեպետ ազատ տնտեսական գոտիները համարվում են Վիեննայի առևտրային կոնվենցիայի դրույթներին հակասող, այնուամենայնիվ բազմաթիվ երկրներում թույլատրելի է համարվել դրանց ստեղծումը գիտության, կրթության և նմանաբնույթ այլ ոլորտներում:

Կարծում ենք, արժեքների ճշգրիտ համադրության շնորհիվ բազմաթիվ վիճահարույց հարցեր կգտնեն իրենց սպառիչ պատասխանը: Մասնավորապես, «մարդու իրավունքներ» եզրույթի խիստ վերացական ու ընդհանրացված մեկնաբանությունների հետևանքով անարգել չեն կարողանա ճանապարհի հարթել տարաբնույթ այնպիսի «այժմեական» տեսություններ, որոնք միտված են սոցիալական առանձին խմբերի կրոնական, սեռական կամ այլ ուղղվածության աղճատված կարիքների բավարարմանը: Սահմանադրական արժեքների համադրության և դրանց հավասարակշռության պարագայում կամրագրվեն այնպիսի արժեքներ, որոնք պետք է որ չեզոքացնեն հիշյալ նկրտումները, մասնավորապես՝ քննարկվող դեպքում հարկ կլինի ելակետ ընդունել այն, որ երեխայի շահերը գերակայող են, և բոլոր իրավակարգավորումների առանցքում պետք է դրվեն հենց նրա շահերը:

Ակնհայտ է, որ այս կարգի դատողություններն ինքնին ապահովագրված չեն տարամեկնաբանություններից ու առարկություններից, սակայն եթե մենք պատկերացնում ենք բանավեճի հարթակ՝ վերը նշված հարցադրումների կտրվածքով, ապա առավել հիմնավորված ու արդարացի է թվում հենց այսպիսի մեթոդաբանությունը:

Նկատենք, որ երեխաների շահերի գերակայության խնդիրը ևս տարաբնույթ ընկալումների տեղիք է տվել: Այսպես, Գերմանիայի օրենսդրությունը չի թույլատրում երեխաների որդեգրում ինչպես վարակիչ հիվանդությամբ, այդ թվում՝ ՉԻԱՀ-ով տառապող անձանց, այնպես էլ առաջիկա 20 տարում հոգեկան հիվանդությամբ տառապելուն հակված անձանց, մինչդեռ Շվեյցարիայի օրենսդրությամբ ՉԻԱՀ-ով հիվանդներին ևս թույլատրվում է որդեգրել երեխաներ: Այլ կերպ ասած՝ անգամ արժեքների համադրության համատեքստում լավատեսության հնարավորությունները նվազ են, սակայն, կրկնում ենք, մեր կարծիքով՝ առկա մեթոդաբանության համակարգում այն ավելի իրատեսական է:

Մենք փորձեցինք մի քանի մասնավոր օրինակներով ընդգծել սահմանադրական արժեքների հակասականության վերաբերյալ մեր մոտեցումների հիմնավորվածությունը:

Սահմանադրական արժեքների հակասականության հիմնախնդիրը ներկայումս, թերևս, մասամբ ընկալվել ու իր ուրույն դրսևորումն է ստացել իրավաստեղծ գործունեության շրջանակներում, սակայն նույնը չի կարելի ասել իրավակիրառ ոլորտի մասին, ինչը, կարծում ենք, պայմանավորված է ավանդական և միաժամանակ անխոցելի այն պատկերացումներով, ըստ որոնց՝ Սահմանադրության յուրաքանչյուր դրույթ, յուրաքանչյուր իրավական նորմ ենթակա են պարտադիր կիրառման, և եթե նորմատիվիստական կտրվածքով չկա ակնհայտ որևէ հակասականություն, ապա գործնական որևէ նշանակություն չունի այդ արժեքների աքսիոլոգիական ուղղվածությունը:

Կարծում ենք, ակնկալելի իրավաչափ առավելագույն արդյունքների հնարավոր կլինի հասնել միայն այն դեպքում, երբ իրավաստեղծ գործունեությունում փորձ արվի արմատապես վերանայելու սահմանադրական արժեքների վերաբերյալ ոչ միայն առանձին վերցրած, այլև այլ արժեքների համակարգում դրանց ճշգրտված «կշռի» մասին պատկերացումները:

Հավելենք նաև, որ առաջադրված մեթոդաբանության պայմաններում հարկ կլինի վերաիմաստավորել սահմանադրաիրավական բազմաթիվ ինստիտուտներ ու հիմնադրույթներ: Մասնավորապես, քննարկվող տեսակետից, օրինակ, իրավաչափ չի կարող համարվել «իրավական պետություն» և «իրավունքի գերակայություն» եզրույթների միջև հավասարության նշան դնելը: Մեր կարծիքով, ներկայումս առավել տիրապետող է դարձել այդ եզրույթների անհարկի նույնականացումը, ինչը հնարավորություն չի տալիս հստակեցնելու դրանցից յուրաքանչյուրի «կշիռը», իսկ մյուս կողմից՝ դրանցից յուրաքանչյուրը տարաբնույթ այլ բաղադրիչներով ծանրաբեռնելը հանգեցնում է բուն հիմնադրույթի էության խեղաթյուրմանը: Եվ, վերջապես, արժեքների համադրման պահանջն անխուսափելիորեն ենթադրում է դրանց համակարգված պաշտպանություն, հակառակ դեպքում հատվածաբար լուծումները հանգեցնում են հակասական, անընդունելի իրավիճակների. «Խոշտանգումներին, կամայական կալանավորմանը և մահապատժին վերջ դնելու ջանքերն արժանի են դրվատանքի և վայելում են մեր անվերապահ աջակցությունը: Սակայն, եթե հարցը սրենք, ապա ի՞նչ տևական ձեռքբերման մասին է խոսքը, եթե համապատասխան կանք ու պատշաճ վերահսկողություն չլինեն»<sup>5</sup>:

Ամփոփելով սահմանադրական արժեքների հակասականության վերաբերյալ մեր դատողությունները՝ նպատակահարմար ենք համարում շեշտել, որ հիշյալ հակասականությունը ինքնին բացասական երևույթ չէ, պարզապես այն անխուսափելի իրողություն է, և դրա համարժեք ընկալումը հնարավորություն կտա ձևավորելու առավել արդյունավետ, հիմնավորված ու արդարացի իրավական համակարգ, որում ոչ միայն զուտ հռչա-

<sup>5</sup> Տե՛ս Ա. Էյդե, Կ. Կրաուզե և Ա. Ռոզաս, Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքներ, Եր., 2009, էջ 9:



կազրային կտրվածքով հստակ կառանձնացվեն գերակայող արժեքները, այլև կերաշխավորվի դրանց գործնական ամրակայումը: Սահմանադրությունը ի վերջո ոչ միայն արտացոլում է հասարակության տարբեր խավերի և նրանց կողմից սուբյեկտիվորեն գնահատվող արժեքների, այլև պետության անցյալի և ապագայի ամբողջությունը: Իսկ խնդրի լուծման բանալին, թերևս, սահմանադրաիրավական նորմերում միանշանակ, սահմանափակում չնախատեսող դրույթներից (բացի բացարձակ արժեքներից) հնարավորինս զերծ մնալն է:

**Բանալի բառեր** – սահմանադրություն, ներքին հակասություն, հասարակական արժեք, քաղաքական արժեք, իրավական արժեք, միատեսակ իրավական արժեք, միատեսակ իրավական մոտեցում, հիմնական իրավունքներ և ազատություններ, սահմանադրական նորմեր, համապարտադիր, իրավունքի գերակայություն

**ГЕВОРГ ДАНИЕЛЯН – Конституционно-правовое отражение внутренних противоречий общества.** – Как отражены в Основном законе неизбежные в обществе противоречия? Закреплённые в Конституции нормы и институты не могут иметь одинаковую ценность, и всеобщая обязательность правовых норм не подразумевает, что их правовое значение одинаково.

В статье критикуется подход, распространённый как в правотворческой, так и в правоприменительной сфере, согласно которому каждая норма Конституции общеобязательна и подлежит безоговорочному исполнению. В частности, общественные ценности, имея различное социально-политическое значение, неизбежно приобретают и различный правовой вес. А это, в свою очередь, означает, что в случае неизбежных конфликтов преимущество должно принадлежать нормам, отражающим более “весомые” ценности.

В статье приводятся примеры, которые обосновывают правомерность указанного подхода. Так, предусмотренная статьёй 3-й Конституции норма, в соответствии с которой человек, его достоинство, основные права и свободы являются высшей ценностью, недостаточно правомерна, т. к. человек – более высокая ценность, чем его права и свободы; последние являются лишь средством укрепить человека в качестве высшей ценности.

**Ключевые слова** – конституция, внутреннее противоречие, общественная ценность, политическая ценность, правовая ценность, единообразная правовая ценность, единообразный правовой подход, основные права и обязанности, конституционные нормы, общеобязательный, превосходство права

**GEVORG DANIELYAN – Constitutional-legal Reflection of the Internal Conflicts of the Society.** – The issues concerning the reflection of the inevitable conflicts in the society in the Basic Law are discussed in the article presented. The author states that the norms and institutions enshrined in the Constitution can not have the same value, and general obligatory force of legal norms does not imply the same legal importance for them.

The approach common both in law-making and in law-enforcement sphere, according to which each norm of the Constitution has general obligatory force and is subject to peremptory implementation, is criticized in the article. In particular, the author believes that social values, having different socio-political value and importance, at the same time inevitably gain different legal value. And this, in turn, means that in the case of unavoidable conflicts preference should be given to those norms, which reflect more "weighty" values.

Numerous examples that justify the relevancy of the above-mentioned approach are demonstrated in the article. Thus, the author believes that the norm enshrined in Article 3 of the Constitution, according to which the human being, his dignity and the fundamental human rights and freedoms are an ultimate value, does not possess the necessary level of legitimacy, since the human being is a higher value than his/her fundamental rights and freedoms: the latter ones are only means in the aspect of the constitutional enshrinement of the human being as an ultimate value.

**Key words** – *constitution, internal conflict, social value, political value, legal value, uniform legal value, uniform legal approach, fundamental rights and duties, constitutional norms, obligatory, supremacy of law*